Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքի ղեկավարի պաշտոնակատարը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշենի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիրը 3.1-1)

- իրականացնում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը
- ապահովում է աշխատակազմի գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարում
- պաշտոնի անձնագրով սահմանված այլ գործառույթներ

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) առնվազն միջնակարգ կրթություն.

բ) ունի «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կկայանա 5 սեպտեմբերի 2018թ. ժամը 11-00 Մրգաշենի համայնքապետարանի շենքում (գ. Մրգաշեն).

Դիմող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձիք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)

- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի (վեջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները բնօրինակների հետ միասին.
- արական սեռի անձիք նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասի կցագրման վկայականի պատճենը բնօրինակի հետ միասին
- մեկ լուսանկար 3×4սմ չափի
- անձնագրի պատճեն

Փաստաթղթերը ընդունվում են Մրգաշենի համայնքապետարանի աշխատակազմում, հեռ. 077-01-00-12 կամ ք. Հրազդան, Կենտրոն վարչական շենք, Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնում, հեռ. 0223 23413, ժամը 10-00 -ից մինչև 15-00 –ն, բացի շաբաթ և կիրակի օրերից.

Փստաթղթերի ներկայացման վերջին ժամկետն է 20.08.2018թ.